

**ՀԱՄԱՅՆՔ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ**

1. Համայնքի ղեկավարը համայնքի տարածքում պետական, մշակութային քաղաքականությունն իրականացնում է
 - Կրթամարզամշակութային համալիրի
 - Երկրագիտական թանգարանի
 - Գրադարանի և նախակրթարանի միջոցով:
2. Համայնքի ղեկավարը կազմակերպում և կառավարում է վերոնշյալ մշակութային կազմակերպությունների գործունեությունը, իրականացնում դրանց շահագործման և նորոգման աշխատանքները:

Կրթամարզամշակութային համալիրի երաժշտության բաժնում /հիմնականում դաշնամուր/ սովորում են 23 աշակերտներ, նկարչության բաժնում՝ 8 աշակերտներ: Աշակերտները մասնակցում են բազմաթիվ փառատոն-մրցույթների և զբաղեցրել են առաջնակարգ և տարբեր մրցանակային տեղեր: Դասատուների թիվը՝ 4: Նախակրթարան են հաճախում շուրջ 55 սաներ, աշխատողների թիվը՝ 10:

Կրթամարզամշակութային համալիրում է գործում համայնքի **Երկրագիտական Թանգարանը**, որտեղ ներկայացված է համայնքի պատմությունը, ժողովրդի կենսագրությունը՝ մշակույթը: Թանգարանում առկա է 850 անուն ցուցանմուշ. /վաղ բրոնզեդարյան, երկաթեդարյան, միջնադարյան ցուցանմուշներ, կենցաղային առարկաներ, դրամներ, մեդալներ, արխիվային այլ փաստաթղթեր/: Տարվա կտրվածքով թանգարան են այցելում շուրջ 110 այցելուներ: Աշխատողների թիվը՝ 1: Թանգարանի տարածքը ենթակա է մասնակի վերանորոգման:

Կրթամարզամշակութային համալիրում է գործում համայնքի **Գրադարանը**: Աշխատողների թիվը՝ 1: Գրքային ֆոնդը 01.01.2016թ. դրությամբ կազմել է՝ 11.443: Տարվա վերջում գրադարանը համալրվել է 51 կտոր գրականությամբ: Գրադարան այցելուների թիվը կազմում է 4613, տրամադրված գրականության թիվը՝ 4807: Տարածքը ջեռուցվում է և հարմար պայմաններ են ստեղծված գրքերի պահպանման և օգտագործման համար: Կազմակերպված միջոցառումների թիվը՝ 12:

3. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում, համայնքը կազմակերպում է մասսայական միջոցառումներ ՀՀ պետական տոների՝ Անկախության, Հանրապետության, Խաղաղության և հաղթանակի, Ազգային բանակի օրերի կապակցությամբ, ինչպես նաև Եղեռնի ու Երկրաշարժի զոհերի հիշատակության օրեր: Բացի վերը նշվածը, հաճախակի կազմակերպվում են մեծարման երեկոներ, նոր գրքերի քննարկումներ, հետաքրքիր հանդիպումներ անվանի մարդկանց հետ, ինչպես նաև ժամանցային միջոցառումներ:

4. Համայնքապետարանը մշտական ուշադրություն է դարձնում ժող. ստեղծագործունեությանը և գեղարվեստական ինքնագործունեությանը, ազգային արհեստների պահպանմանն ու զարգացմանը:

Համայնքապետի կողմից մշտապես խրախուսվում են փառատոն-մրցույթների մասնակից երեխաները և ինքնուս ստեղծագործողները:

5. Համապատասխան աշխատանքներ են կատարվում համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության նպատակով: Մշտապես իրականացվում է նրանց տարածքների սանիտարական մաքրումներ և ընթացիկ բարեկարգման աշխատանքներ: Համայնքի վարչական տարածքում շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքների կատարման ժամանակ հուշարձաններ չեն հայտնաբերվել: Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինը օգտագործման կամ վարձակալության հանձնված համայնքի սեփականություն համարվող հուշարձան շենքեր և շինություններ չունի:

6. Համայնքապետարանի կողմից հուշարձանի պահպանական գոտում հողի, համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերի և շինությունների վարձակալությամբ տրամադրելու կամ սեփականության կարգով վաճառքի դեպքեր չկան, ուստի օգտագործողների հետ հուշարձանների պահպանության պայմանագրերի կամ պարտավորագրերի կնքման անհրաժեշտություն չկա:

Տեղեկույթը՝ Մհեր Մելիքյանի
10.04.2017թ.